ՄԵՐ
ԱՊԱԳԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

CHESS ACADEMY OF ARMENIA

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԵՐ ԱՊԱԳԱՅԻՆ»

արագ շախմատի մրցաշար

1. Կազմակերպիչներ

Մրցաշարը կազմակերպում են «Մեր ապագան» հիմնադրամը և Հայաստանի շախմատի ակադեմիան։

2. Անցկացման օրը և վայրը

Մրցաշարը կանցկացվի 2026 թվականի նոյեմբերի 7-ին՝ ժամը 12:00-ին։
Անցկացման վայրը՝ ք. Աշտարակ, Սիսակյան 14, 48/2։

3. Մասնակիցներ

Մրցաշարին կարող են մասնակցել մինչև 10 տարեկան պատանիները և աղջիկները։

4. Անցկացման կարգը և ժամակարգը

Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով՝ 7 տուրով։
Ժամակարգը՝ 5 րոպե յուրաքանչյուր մասնակցին՝ յուրաքանչյուր քայլի համար 3 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից։

5. Լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորների դեպքում տեղերը կորոշվեն հաջորդաբար՝ հատած Բուխհոլցի, Բուխհոլցի, անձնական հանդիպման արդյունքի և սև խաղաքարերով խաղացած պարտիաների քանակի ցուցանիշներով։

6. Մրցանակներ և պարգևատրում

I տեղ	II տեղ	III տեղ
20 000 դրամ	**15 000 դրամ**	**10 000 դրամ**

Հատուկ մրցանակներ՝
• Լավագույն արդյունք մինչև 8 տարեկան պատանիների խմբում՝ 5 000 դրամ։
• Լավագույն արդյունք մինչև 8 տարեկան աղջիկների խմբում՝ 5 000 դրամ։

1-3-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կպարգևատրվեն դիպլոմներով, մեդալներով և գավաթներով։